

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

ՀՀ ԲՍՓ գործակալության գործակարգավարական խորհրդակցության
13.07.2018թ ժամը 13:00

Խորհրդակցությունը վարում էր ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության
գործակալության պետի տեղակալ՝ Ն. Շահվերդյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Կազմակերպչական հարցեր կապված արատավոր երևույթը՝ կոռուպցիան (հովանավորչությունը և կաշառքը) բացատելու և բժիշկ-փորձագետի պաշտոնի բնութագրով սահմանված փորձաքննվող անձանց բժշկասոցիալական փորձաքննությունը և դրանից բխող այլ գործառույթներ իրականացնելու մասին:
2. Քաղաքացիների հանդեպ սիրալիր վերաբերմունքի վերաբերյալ:
3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018թ հունվարի 29-ի N 18-Ա/1 հրամանի՝ ««Բժշկասոցիալական փորձաքննության օգտագործվող չափորոշիչների կիրակման՝ հաշմանդամության հանգեցնող հիվանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ» մեթոդական ուղեցույց»-ով պարտադիր առաջնորդվելու վերաբերյալ:
4. Հաշմանդամություն ունեցող անձանց Վերականգնողական անհատական ծրագրերի (ՎԱԾ-երի) անսխալ կազմման, պարզ և ընթեռնելի լրացման, ինչպես նաև անճշտություններից խուսափելու համար վերականգնողաբանների հետ համագործակցության վերաբերյալ:
5. «Փյունիկ» ՏՀ-ում ԲՍՓ գործերի տվյալների մուտքագրումների, ուղղումների վերաբերյալ:
6. Փորձաքննվող անձանց ԲՍՓ գործերը ամենայն պատասխանատվությամբ լրացնելու վերաբերյալ:

Հանձնարարվեց

1. Քաղաքացիների հետ հաղորդակցվելիս լինել առավելագույնս հարգալից և բարձր պատասխանատվությամբ վերաբերվել նրանց կողմից բարձրացված հարցերին, բացատելով կոռուպցիայի որևէ դրսևորում:
2. Բարձր պահել աշխատանքային կարգապահության մակարդակը:
3. Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրված Վերականգնողական անհատական ծրագրերը մուտքագրել «Փյունիկ» ՏՀ, գրանցել յուրաքանչյուր անձի կարիքը, ինչ

ծառայություն է ցանկանում որ իրականացնեն, նշել մերժման պատճառները, բացատրել դրա օգտակարության, անվճար բուժման հնարավորության մասին:

4. Կենտրոնական ռազմական բժշկական հանձնաժողովների կողմից տրամադրված որոշումները ընդունել նույնությամբ:
5. Վերափորձաքննության բաժին ուղարկվող գործերը լիարժեք լրացնել, գործերը սահմանված ժամկետում ուղարկել իրավական ապահովման բաժին՝ հաշվի առնելով բողոքների բավականին մեծ թիվը:
6. Փորձաքննվող անձանց անվճար հետազոտության ուղեգրել միայն ԲՍՓ ուղեգրերով:
7. Առաջնորդվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018թ հունվարի 29-ի N 18-Ա/1 հրամանի՝ ««Բժշկասոցիալական փորձաքննության օգտագործվող չափորոշիչների կիրակման՝ հաշմանդամության հանգեցնող հիվանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ» մեթոդական ուղեցույց»-ով:
8. Հոգեբուժական խնդիր ունեցող փորձաքննվող անձանցից պահանջել միայն երեք հոգեբույժի կողմից հաստատված ախտորոշում:
9. Տարածքային մարմիններին պաշտոնապես էլեկտրոնային փոստով տրամադրված տեղեկատվությունը ընդունել ժամանակին:
10. ԲՍՓ գործերը և ՎԱԾ-երը լրացնել անթերի, լիարժեք և ընթեռնելի ձեռագրով:

Գործակալության պետի տեղակալ՝ *Զ. Լաև. Ն. Շահվերդյան*

Քարտուղար՝

Ա. Մկրտչյան

13.07.2018թ.